



ԿԱՐԾԻՔ

Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նոր միջոցառումների վերաբերյալ

ՀՀ առողջապահության նախարարի 20 օգոստոսի 2021թ. ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020թ. սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին թիվ 65-Ն հրամանով¹ նախատեսվում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական նոր կանոններ², համաձայն որոնց՝ «աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության ախորոշման պոլիմերազային շղթայական հետազոտության (ՊՇՌ հետազոտության) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության, առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ, բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների: Հետազոտությունն իրականացնում է աշխատողը՝ իր հաշվին»:

Միաժամանակ, հանրային քննարկման է դրվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը³, որով նախատեսվում է սահմանել «հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի (ծառայության) չթույլատրելու, պաշտոնից կամ ծառայությունից ազատելու (լիազորությունները կամ ծառայությունը դադարեցնելու) առանձնահատուկ հիմքեր»: Նույն նախագծով առաջարկվում է նման առանձնահատուկ հիմքեր սահմանել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ սահմանված՝ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային ավտանգության կանոններով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթեր ներկայացնելը աշխատանքի (ծառայության) ներկայանալիս (Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ): Ընդ որում, նախագծով մինչև վերոգրյալ պարտականությունը չկատարելը աշխատողին չի թույլատրվում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները և չի տրամադրվում վարձատրություն՝ մինչև օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված պարտականությունները կատարելը:

Ըստ օրենքի նախագծի՝ սահմանված պարտականությունների խախտման արդյունքում իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 50 օր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները չկատարելը հանրային պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելու կամ հանրային ծառայողի լիազորությունները դադարեցնելու (ծառայությունից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու) հիմք է: Միաժամանակ, նշված պարտականության կատարումից բացառություն է նախատեսված Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, վարչապետի, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի,

¹ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրաման, 20 օգոստոսի 2021թ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155352>
² Կանոնները վերաբերում են ինչպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների գործունեության կազմակերպման ընթացքում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման միջոցառումներին:
³ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/3541>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական դատարանի դատավորի, անկախ պետական մարմնի անդամի, ինքնավար մարմնի անդամի, Վիճակագրության պետական խորհրդի անդամի, վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանի դատավորի, գլխավոր դատախազի պաշտոնների համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Վավրիկան և այլք ընդդեմ Չեխիայի վճռով⁴ առաջին անգամ անդրադառնալով երեխաների պարտադիր պատվաստումների համատեքստում անձի անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի պաշտպանությանը, արձանագրել է, որ պարտադիր պատվաստման օրենսդրական պահանջը հանդիսանում է միջամտություն անձի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքին: Սակայն, պետությունը կրում է պոզիտիվ պարտավորություն ձեռք առնելու անհրաժեշտ միջոցառումներ՝ պաշտպանելու իր իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքն ու առողջությունը: Այլ անձանց իրավունքները և առողջությունը պաշտպանելու նպատակը Դատարանը դիտել է որպես իրավաչափ նպատակ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելու համար: Անդրադառնալով միջոցների անհրաժեշտությանը, համաչափությանը և հիմնավորվածությանը՝ Դատարանն էական նշանակություն է տվել Չեխիայի կողմից ներկայացված հիմնավորումներին: Գիտությանը հայտնի 9 տեսակի ծանր հիվանդություններից երեխաներին պաշտպանելու համար կարևորվել է վաղ տարիքում պատվաստումների ամբողջական ժամանակացույցի (չափաբաժինների) ընդունումը: Չպատվաստված երեխաներն անուղղակիորեն պաշտպանվում են վարակիչ ծանր հիվանդություններից այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունում պատվաստման անհրաժեշտ ծավալները պահպանվում են: Այլ կերպ, նրանց պաշտպանում է հանրային իմունիտետը: Հետևաբար, եթե կամավոր պատվաստումների քաղաքականությունը բավարար չէ հանրային իմունիտետի հաստատման և պահպանման համար, պետական իշխանությունները կարող են ողջամտորեն ներդնել պարտադիր պատվաստումների քաղաքականություն՝ լուրջ հիվանդություններից պաշտպանության համապատասխան մակարդակի հասնելու համար: Միաժամանակ, չնայած պատվաստումը եղել է պարտադիր, նախատեսված են եղել նաև բացառություններ, օրինակ, պատվաստումների նկատմամբ երեխայի հակացուցումները, ինչպես նաև խղճի առարկությունները: Այդպիսով, Դատարանը տվյալ գործով արձանագրել է, որ պետության կողմից ներդրված միջոցները համաչափ են եղել հետապնդվող իրավաչափ նպատակին:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում առաջարկվող կարգավորումների իրավաչափությանը՝ գտնում ենք, որ դրանք անհրաժեշտ, համաչափ և հիմնավոր չեն հետապնդվող նպատակին հասնելու համար, այն է՝ կանխարգելելու կորոնավիրուսային հիվանդության տարածվածությունը և պաշտպանելու Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքն ու առողջությունը: Ավելին, դրանք խտրական են և կարող են հանգեցնել ինչպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների աշխատողների իրավունքների խախտումների: Մասնավորապես՝

Քննարկվող կարգավորումները հակասում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, և մասնավորապես Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 31-րդ, 57-րդ, 78-րդ հոդվածներին:

Նշված պահանջների միակ թիրախ են հանդիսանում աշխատող քաղաքացիները: Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հուլիսի դրությամբ գրանցված աշխատողների թիվը կազմել է 614,459 անձ⁵:

⁴ Vavrička and Others v. the Czech Republic, վճիռ 08 ապրիլ 2021թ. <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-209039>

⁵ <http://cedi.am/wp-content/uploads/2019/12/%D4%B3%D5%90%D4%B1%D5%86%D5%91%D5%8E%D4%B1%D4%BE-%D4%B1%D5%87%D4%BD%D4%B1%D5%8F%D5%88%D5%82%D5%86%D4%B5%D5%90%D4%BB-%D4%B9%D5%8E%D4%B1%D5%94%D4%B1%D4%BF%D4%BB-%D4%B4%D4%BB%D5%86%D4%B1%D5%84%D4%BF%D4%BB%D4%B1%D5%86-3.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության հիմնավորումների՝ շուրջ 246,900 անձ աշխատում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Նման պայմաններում, կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, այդ թվում՝ ՊՇՌ հետազոտություն անցնելու կամ պատվաստվելու պարտավորությունը դրվում է ՀՀ բնակչության միայն առնվազն 1/4-ի վրա: ՀՀ արդարադատության նախարարության այն փաստարկները, որ աշխատող, և հատկապես հանրային ծառայություն իրականացնող անձինք «պարբերական շփումների մեջ են գտնվում հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ», հիմնավորված չեն, քանի որ հասարակության տարբեր ներկայացուցիչների միջև շփումներ տեղի է ունենում ամենուր և բոլորովին պայմանավորված չէ անձանց աշխատանքային գործունեությամբ: Միաժամանակ, նույն կարգավորումներով հաշվի չի առնվում աշխատանքային գործունեության ընթացքում մարդկային շփումների ինտենսիվությունը, տևողությունը, կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խմբերի հետ աշխատանքը: Օրինակ, ՊՇՌ հետազոտություն անցնելու կամ պատվաստվելու պարտականությունից բառացիություններ են նախատեսված են Ազգային ժողովի պատգամավորների համար, ովքեր մասնակցում են ոչ միայն երկարատև նիստերի մեկ ընդհանուր փակ դահլիճում, այլև շփումներ են ունենում հասարակության ներկայացուցիչների հետ և այլն: Նույն կերպ, ՊՇՌ հետազոտություն անցնելու կամ պատվաստման պարտավորություն նախատեսված չէ, օրինակ, ԲՈՒՀ-երի ուսանողների կամ հանրակրթական դպրոցի աշակերտների համար, ովքեր երկարատև լսարանային պայմաններում դասապրոցես են իրականացնում:

Նման պայմաններում, Հանրապետության բնակչության առնվազն 1/4-ի նկատմամբ հետազոտություն անցնելու կամ պատվաստվելու պարտականություն նախատեսելը չի հիմնավորվում նաև հանրային իմունիտետ ձևավորելու անհրաժեշտությամբ, քանի որ ՊՇՌ հետազոտությունների իրականացումը, անգամ պարբերական բնույթ կրող, այդ նպատակն ապահովել չի կարող:

Ավելին, անհասկանալի է աշխատողից առավելագույնը 72 ժամ վաղեմության ՊՇՌ հետազոտության արդյունքը ներկայացնելու պարտականության սահմանումը, եթե այդ հետազոտության արդյունքները վավեր են առնվազն 14 օր, քանի որ աշխատողների կողմից ՊՇՌ հետազոտության բացասական արդյունք ներկայացնելու պահանջը որևէ կերպ չի նվազեցնում վարակի տարածվածությունը, և հետազոտությունից հետո անձը կարող է վարակվել և դառնալ վարակի աղբյուր: Ավելին, ՊՇՌ տեսավորման արդյունքները 100% ճշգրիտ չեն, որի մասին վկայում է տեստի արդյունքներում արվող վերապահումը:

Ավելին, Հայաստանի Հանրապետությունում ՊՇՌ հետազոտության գումարը տատանվում է 9000-15000 ՀՀ դրամի շրջանակներում, ինչը ՀՀ սոցիալ-տնտեսական պայմաններում նվազագույն և միջին աշխատավարձ ունեցող աշխատողների համար էական ֆինանսական բեռ է: Այսինքն, նման երկրնորանքի պայմաններում պատվաստումը հանդիսանում է չպարտադրված հարկադրանք: Ընդ որում, պատվաստված անձինք ևս կարող են վարակվել կորոնավիրուսային հիվանդությամբ և ավելին՝ վարակել այլ անձանց, մինչդեռ պատվաստված քաղաքացիներն ազատվում են ՊՇՌ հետազոտություն անցնելու պարտավորությունից:

Եթե մասնավոր ոլորտում գործատու-աշխատող հարաբերությունների կարգավորումը, այդ թվում՝ աշխատողի՝ առանց ՊՇՌ հետազոտության արդյունք կամ պատվաստման սերտիֆիկատ ներկայացնելու աշխատանքի ներկայանալու հարաբերությունները թողնված են գործատուի հայեցողությանը և ուղղակի հետևանքներ կարող են առաջացնել գործատուների համար, ապա հանրային ծառայության ոլորտում հանրային քննարկման դրված օրենքի նախագիծը նախատեսում է, որ այդ պարտականությունը չկատարելը հանգեցնում է աշխատողի նկատմամբ անբարենպաստ հետևանքների, այդ թվում՝ վարձատրությունից զրկելուն և հետագայում աշխատանքից/ծառայությունից ազատելուն: Նման հետևանքներն իրենց բնույթով և ծանրությամբ պատժիչ են, և աշխատողին դնում են խոցելի իրավիճակում՝ հետևելու հարկադրված



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վարվելակերպին: ***Այսինքն, հանրային պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողները գտնվում են առավել վատթար վիճակում:***

Ավելին, լիազոր մարմինների կողմից չի ներկայացվել որևէ հիմնավորում, թե ինչու մինչ այժմ գործող սանիտարահամաճարակային ավտանգության կանոնների պահպանումը արդյունավետ չեն կորոնավիրուսային հիվանդության տարածվածությունը կանխելու և անձանց կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար: Ավելին, գերծանրաբեռնված պայմաններում աշխատող հասարակական տրանսպորտից օգտվելիս ՀՀ իրավագրության ներքո գտնվող անձինք գտնվում կորոնավիրուսային հիվանդության տարածման համար առավել բարենպաստ պայմաններում, քան պետական մարմիններում սպասարկվելիս: Մինչդեռ պետական և համայնքային մարմինների կողմից որևէ արդյունավետ քայլ նման իրավիճակից բխող ռիսկերի նվազեցման ուղղությամբ չեն նախաձեռնվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

- Անվավեր ճանաչել և վերացնել ՀՀ առողջապահության նախարարի 20.08.2021 թ.-ի N 65-Ն հրամանը,
- Հետ կանչել Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը,
- Շահագրգիռ կողմերի հետ քննարկել կանխարգելիչ միջոցառումների կիրառման հարցերը՝ բացառելու մարդու իրավունքների չհիմնավորված սահմանափակումների, այդ թվում՝ խտրականության և աշխատանքային իրավունքների խախտումների հնարավորությունը: